



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

''07'' օգոստոսի 2013 թ.


թիվ 27 -Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ 2013 ԹՎԱԿԱՆԻՆ ԱՆՑԿԱՑՎԵԼԻՔ  
ՓՈՐՁՆԱԿԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՄԱՏԱՐԱԾ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ  
ԳՅՈՒՂԱԿԱՆ ԵՎ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐՈՒՄ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ  
ՀԱՄԱՏԱՐԱԾ ՀԱՇՎԱՌՄԱՆ 4-ԳՀՀ ՀԱՐՑԱԹԵՐԹԻ ԼՐԱՑՄԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑԸ  
ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Գյուղատնտեսական համատարած հաշվառման» մասին Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ հոդվածի 5-րդ մասով՝ Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհուրդը որոշում է.

Հաստատել

«ՀՀ 2013թ. փորձնական գյուղատնտեսական հաշվառման ընթացքում գյուղական և քաղաքային համայնքներում գյուղատնտեսական համատարած հաշվառման 4-ԳՀՀ» հարցաթերթի լրացման ուղեցույցը՝ համաձայն հավելվածի:



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԱԶԳԱՅԻՆ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

Հավելված

Հայաստանի Հանրապետության  
վիճակագրության պետական խորհրդի  
2013 թվականի օգոստոսի 7-ի թիվ 27-Ա որոշման

## ՈՒ Ղ Ե Ց ՈՒ ՅՑ

ՀՀ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՓՈՐՁՆԱԿԱՆ  
ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՄԱՏԱՐԱԾ  
ՀԱՇՎԱՌՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ  
ԳՅՈՒՂԱԿԱՆ ԵՎ ՔԱՂԱՔԱՅԻՆ  
ՀԱՄԱՅՆՔՆԵՐՈՒՄ  
ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՄԱՏԱՐԱԾ  
ՀԱՇՎԱՌՄԱՆ 4-ԳՀՀ ՀԱՐՑԱԹԵՐԹԻ ԼՐԱՑՄԱՆ

**ՀՀ 2013Թ. ՓՈՐՁՆԱԿԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏՄԱԿԱՆ  
ՀԱՄԱՏԱՐԱԾ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ**

**ԳՅՈՒՂԱԿԱՆ ԵՎ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐՈՒՄ  
ԳՅՈՒՂԱՏՆՏԵՄԱԿԱՆ ՀԱՄԱՏԱՐԱԾ ՀԱՇՎԱՌՄԱՆ  
4-ԳՀՀ ՀԱՐՑԱԹԵՐԹԻ ԼՐԱՅՈՒՄ**

***Հասցեամասի լրացումը***

ՀՀ 2013թ. փորձնական գյուղատնտեսական համատարած հաշվառման (այսուհետ՝ ԳՀՀ) գյուղական և քաղաքային համայնքներում գյուղատնտեսական համատարած հաշվառման **4-ԳՀՀ հարցաթերթը** լրացվում է համայնքների ղեկավարների կողմից: Հարցաթերթի լրացումը սկսվում է հասցեամասի լրացումից:

**ԲԱԺԻՆ I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ**

Լրացվում է **մարզի, համայնքի** անվանումը, ինչպես նաև՝ տվյալ համայնքի ղեկավարի անուն, ազգանունը:

«Մարզ» և «Համայնք» տողերին համապատասխան վանդակները չեն լրացվում համայնքի ղեկավարի կողմից, քանզի դրանք նախատեսված են ծածկագրման համար, որը կատարվում է տվյալների ամփոփման փուլում ՀՀ ազգային վիճակագրական ծառայության կողմից:

**Ուշադրություն՝** հարցաթերթի լրացման ժամանակ հարցաթերթում բերված բոլոր հարցերը՝ իրենց հնարավոր պատասխանների բոլոր տարբերակներով, ենթադրում են պատասխան: Այն աղյուսակներում, որոնց տողերում պետք է լրացվեն թվային ցուցանիշներ, վերջիններիս առկայության դեպքում գրվում է համապատասխան թիվը, իսկ բացակայության դեպքում անպայման գրվում է «0»:

Այն աղյուսակներում, որտեղ հնարավոր պատասխանի դեպքում պահանջվում է կատարել համապատասխան (X) նշումը, տվյալ աղյուսակներում ցուցանիշի բացակայության պարագայում «0» գրել չի պահանջվում, պատասխան չունեցող տողերին համապատասխան վանդակները կմնան դատարկ:

**ԲԱԺԻՆ II. ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ  
ՀԱՆԴԻՄԱՑՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՄԱԿԱՆ ՀՈՂԱՏԵՍՔԵՐ**

**Հարց 4. Գյուղատնտեսական նշանակության հողատեսքերի տարածություններն ըստ տիրապետման տեսակների առ 10.10.2013թ.**

Աղյուսակում տվյալ համայնքի ղեկավարի կողմից լրացվում է համայնքային սեփականություն հանդիսացող հողերի (ըստ հողատեսքերի՝ վարելահող, պտղատու այգի և հատապտղանոց, խաղողի այգի, խոտհարք, արոտավայր) վերաբերյալ տվյալները՝ համաձայն աղյուսակում բերված «*հողեր, ընդամենը*» և «*որից տրված է վարձակալության*» տողերով:

«**Հողեր, ընդամենը**» /կոդ 01/ տողում լրացվում են աղյուսակի 1-5 սյունակներն ըստ պահանջվող տեղեկատվության:

«**Որից տրված է վարձակալության**» /կոդ 02/ տողում լրացվում են համայնքի սեփականություն հանդիսացող ընդամենը հողերից այն հողերի տարածությունները, որոնք նշված պահի դրությամբ տրված են վարձակալության՝ 0.00 հա ճշտությամբ, համաձայն սյունակներով պահանջվող տեղեկատվության:

Աղյուսակի «**Այլ հողեր**» սյունակում, ըստ տողերով պահանջվող տեղեկատվության (*հողեր ընդամենը և որից՝ տրված է վարձակալության*), լրացվում են համայնքային սեփականություն հանդիսացող այլ հողերի տարածությունների վերաբերյալ տվյալները՝ 0.00 հա ճշտությամբ:

**ԲԱԺԻՆ III. ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՀԱՇՎԱՌՎԱԾ, ՍԱԿԱՅՆ  
ՀԱՄԱՅՆՔԻՑ ԲԱՑԱԿԱՅՈՂ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀՈՂԵՐԸ,  
ՈՐՈՆՔ ՉԵՆ ՄՇԱԿՎՈՒՄ**

առ 10.10.2013թ.

Աղյուսակում համայնքի ղեկավարի կողմից լրացվում են տվյալ համայնքում հաշվառված, սակայն ամբողջ կազմով համայնքից բացակայող տնտեսությունների սեփականություն հանդիսացող և միայն չմշակվող հողերի վերաբերյալ տվյալները՝ աղյուսակում պահանջվող տեղեկատվությանը համապատասխան:

**ԲԱԺԻՆ IV. ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿԻՉ ՉՀԱՆԴԻՍԱՑՈՂ, ՍԱԿԱՅՆ  
ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՍԵՓԱԿԱՆ ՀՈՂԵՐ ՈՒՆԵՑՈՂ  
ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀՈՂԵՐԸ**

առ 10.10.2013թ.

Աղյուսակում համայնքի ղեկավարի կողմից լրացվում են տվյալ համայնքի բնակիչ չհանդիսացող, սակայն համայնքում սեփականության իրավունքով հողեր ունեցող բոլոր տնտեսությունների ընդամենը հողերի վերաբերյալ տվյալները (անկախ այն հանգամանքից՝ դրանք մշակվում են, թե ոչ)՝ աղյուսակում պահանջվող տեղեկատվությանը համապատասխան:

**ԲԱԺԻՆ V. ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ  
ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՑՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ  
ՇԵՆՔԵՐ ՈՒ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ  
ԵՎ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐ**

**Հարց 7. Շենք/շինություններ գյուղատնտեսական կենդանիներ  
ու թռչուններ պահելու և գյուղատնտեսական մթերք  
պահպանելու համար**

առ 10.10.2013թ.

Այս բաժնում համայնքի ղեկավարի կողմից լրացվում է **10.10.2013թ. դրությամբ** միայն համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական կենդանիներ (ցանկացած տեսակի և տարիքի) ու թռչուններ պահելու համար նախատեսված գյուղատնտեսական նշանակության բոլոր շենքերի և շինությունների (*անկախ նրանից 10.10.2013թ. դրությամբ այնտեղ պահվում/պահվել է անասուն թե ոչ*), ինչպես նաև գյուղատնտեսական մթերք (ցանկացած տեսակի) պահպանելու համար նախատեսված **շինությունների մակերեսները**՝ ըստ աղյուսակում բերված առանձին տողերի՝ համապատասխան սյունակով:

Սույն բաժնի 8-12 հարցերի լրացման համար ընտրվում է առաջարկվող «այո» կամ «ոչ» տարբերակներից մեկը, և համապատասխան վանդակում կատարվում նշում (X):

**Հարց 13. Համայնքային սեփականություն ահանդիսացող  
գյուղատնտեսական տեխնիկա և սարքավորումներ  
առ 10.10.2013թ.**

Աղյուսակում համայնքի ղեկավարի կողմից լրացվում են միայն համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական տեխնիկայի և սարքավորումների վերաբերյալ տվյալներ՝ աղյուսակում պահանջվող տեղեկատվությանը համապատասխան:

Աղյուսակի 1-ին սյունակում լրացվում են **10.10.2013թ. դրությամբ** միայն համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական տեխնիկայի և սարքավորումների (համաձայն հարցաթերթի Բ սյունակում բերված տեսակների) ընդամենը քանակները, անկախ դրանց տարիքից և սարքինության վիճակից:

Աղյուսակի 2-րդ սյունակում, ըստ համապատասխան տողերի, ընդամենը սյունակից առանձնացվում են դրանցից սարքին վիճակում գտնվողների քանակները:

**Սարքին է համարվում** գյուղատնտեսական այն տեխնիկան, որը հարցման պահին գտնվում է աշխատունակ վիճակում, կամ առկա անսարքությունը (կապված չէ հիմնական հանգույցների՝ շարժիչ, փոխանցման տուփ, արջևի և հետևի կամրջակներ ու այլ անսարքություններ, որոնց վերացումը պահանջում է հանգույցների փոխանակում կամ նորոգում) հնարավոր է վերացնել կարճ ժամկետում և քիչ ներդրումներով:

Հարցաթերթը լրացնելուց հետո համայնքի ղեկավարը ստորագրում է այն և դնում լրացված հարցաթերթը ՀՀ ազգային վիճակագրական ծառայության մարզային/տարածքային գործակալություններում / ստորաբաժանումներում ԳՀՀ աշխատանքները համակարգողին հանձնելու ամսաթիվը: